

«ՄԻԱՎ վարակ» – ը հիվանդություն է, որն առաջանում է մարդու իմունային անբավարարության վիրուսից: Այն ախտահարում է իմունային համակարգը, որը հանդիսանում է օրգանիզմի՝ հիվանդություններից պաշտպանման համակարգ:


ՄԻԱՎ վարակը լուրջ հիվանդություն է, որն առանց դեղամիջոցների մշտական ընդունման՝ կարող է հանգեցնել մահվան: Բուժում չստանալու պարագայում ՄԻԱՎ-ը, մի քանի տարիների ընթացքում, հանգեցնում է ՁԻԱՀ-ի՝ Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի: ՁԻԱՀ-ի փուլում գտնվող օրգանիզմը չի կարողանում հաղթահարել հիվանդություններ, որոնք հեշտությամբ կարող է հաղթահարել առողջ մարդու օրգանիզմը:



Միգրացիայում գտնվող մարդու կենսակերպը փոփոխվում է, ինչի հետ կապված մեծանում է ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկը, ուստի անհրաժեշտ է հոգալ սեփական առողջության մասին:

ԻՆՉՊԵՐՍ ԿԱՐՈՂ Ե ՓՈԽԱՆՑԿԵԼ ՄԻԱՎ-Ը.

• առանց պահպանակի սեռական հարաբերության ժամանակ (անկախ զուգընկերոջ սեռից, ազգությունից, ընտանեկան կարգավիճակից),




• ՄԻԱՎ-ով ապրող մարդու արյունն այլ մարդու օրգանիզմում հայնվելու արդյունքում, օրինակ՝ ոչ ստերիլ գործիքներով ներարկումների ժամանակ կամ թմրանյութերի օգտագործման դեպքում:

• ՄԻԱՎ-ով ապրող կնոջից՝ երեխային (հղիության, ծննդաբերության ժամանակ կամ կրծքով կերակրելիս):



ԴՌԷ ՉԵՔ ԿԱՐՈՂ ԿԱՐԱԿԿԵԼ ՄԻԱՎ-ՈՎ

- գրկախառնվելիս, համբուրվելիս կամ ձեռքսեղմելիս,
- հազալիս և փռշտալիս,
- սպասք, սրբիչներ կամ անկողնային պարագաներ համատեղ օգտագործելիս,
- սանհանգույց, լոգախցիկ կամ լոգարան այցելելիս,
- համատեղ սպորտով զբաղվելիս,
- միջատների կամ կենդանների խայթոցից:



ԻՆՉՊԵՐՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՄԻԱՎ-ԻՑ.

- սեռական հարաբերությունների ժամանակ մշտապես օգտագործել պահպանակ՝ բոլոր զուգընկերների հետ,
- ներարկումներ անել միայն բժշկական հաստատություններում, օգտագործել ստերիլ գործիքներ,
- խուսափել այլ մարդկանց արյան հետ շփումից,
- չօգտագործել ուրիշին պատկանող ածելիներ, ատամի խոզանակներ և հիգիենայի այլ պարագաներ, չտրամադրել նաև սեփական պարագաները:



Региональная
экспертная группа
по здоровью мигрантов



ՌԴ-ում ապրելու օրինական
իրավունք ստանալու
համար յուրաքանչյուր
օտարերկրացի պետք
է անցնի բժշկական
հետազոտություններ, այդ
թվում՝ ՄԻԱՎ-ի նկատմամբ
հետազոտություն: Եթե
մարդու մոտ բացահայտվի
ՄԻԱՎ-ը, նա չի կարող
մնալ ՌԴ-ում օրինական
ճանապարհով:

Անհարժեշտ է պարբերաբար (առնվազն
տարին մեկ անգամ) հանձնել ՄԻԱՎ-ի
թեստ, անհրաժեշտության պարագայում
անմիջապես սկսել բուժում, և պահպանել
առողջությունը: Եթե ՄԻԱՎ-ով ապրող մարդն
ընդունում է դեղամիջոցներ, նա պահպանում
է իր առողջությունը և աշխատունակությունը:
Այս դեպքում վարակը չի փոխանցվում մեկ այլ
մարդու:



**ՄԻԱՎ-ի նկատմամբ կարելի է
հետազոտվել անանուն:**

**Տեղեկատվության համար
կարող եք զանգահարել**



+7 967 079-71-45

+7 915 452-83-92

+7 910 000-55-18

հեռախոսահամարներին

Եթե ունեք հարցեր ՄԻԱՎ-ի վերաբերյալ,
կամ ցանկանում եք ստանալ
անվճար խորհրդատվություն ՄԻԱՎ-
ից պաշտպանվելու կամ ՄԻԱՎ-ի
վերաբերյալ անվճար հետազոտվելու
մասին, ապա զանգահարեք հետևյալ
հեռախոսահամարներին՝



**ԻՆՉՊԵՐՍ
ՊԱՇՏՊԱՆՎԵԼ
ՄԻԱՎ-ԻՑ**